

քը՝ Պարոնսաս եւ Ճոհար, եզբայրները՝ Բակերեզիս, Յովնաննես, Կիրակոս, Սարգիս, քոյրերը՝ Տիկիկ եւ Խեր:

7^o. Անանուն գրիչ մը, 1397 ին կ'ընդօրինակէ Յիսուս որդի գիրքը, դարձեալ նոյն վանքին մէջ:

8^o. Գրիգոր Արծկեցի, 1441ին հոն կ'ընդօրինակէ Աւեստրան մը:

9^o. Մանուէլ գրիչ, 1466 ին Ս. Հրեշտակապետի վանքին մէջ կ'ընդօրինակէ Մարտիրոսի Վարդան վրդ.ի գիրքը:



Ժ Բ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՌՇՏՈՒՆԵԱՅ ՎԱՆՔԸ

ՌԻ ԱՆՈՐ ՈՒՐԿԱՆՈՅԸ

1. Նոյն վանքին եւ անոր ուրկանոցին ժիւղութեան շարժառիթը.

Ս. Քաղաքին հայկական վանքերէն մին էր Ռշտունեաց վանքը, որուն ծագման վրայ գրեյէ յառաջ, հարկ կը սեպեմ անոր շինութեան շարժառիթի մասին ծանօթութիւն մը տալ: Տարափոխիկ ակտ մը շատ դարեր յառաջ վարակուած էր Պաղեստինի, մասնաւորապէս Երուսաղէմի մէջ, գիտնալ պէտք է թէ ուրկէ՞ ճարակած էր նոյն հիւանդութիւնը:

Ընդհանուր կարծիք կայ եւ պատմութեամբ ալ կը վկայուի թէ Եբրայեցիներն են որ Եգիպտոսէն Պաղեստին բերած են զայն իրենց հետ որ երկրին մէջ տարածուելով՝ ան փոխանցուած է Եւրոպիոյ եւ Ասիոյ կողմերը: Հնդամատեանը ամենահին յիշատակարանն է, ուր մանրամասն կը նկարագրուի խղճալի վիճակն անոնց՝ որ կ'ենթարկուէին ուրկութեան, Ս. Գրոց բառով՝ «կեղ եգիպտոսի» կոչուած հիւանդութեան (Տէս Երկրորդ Օրհնք. ԻԸ. 27, 35), ըստ Abbé Vigourouxի (Տէս Dict. Bible. Հար. Դ. էջ